ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22.11.2013 17:48

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում գործող ակումբը և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակը համատեղ պարբերաբար կազմակերպում են քննարկումներ սկսնակ փաստաբանների համար:
Հաշվի առնելով, որ 2013 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ փաստաբանական դպրոցի թվով 60 շրջանավարտներ ստացել են փաստաբանական գործունեության արտոնագրեր որոշվել է կազմակերպել քննարկում, որը նվիրված էր Փաստաբանական գործունեության իրականացման առանձնահատկություններին (կազմակերպաիրավական ձևերը և հարկային առանձնահատկությունները): Թեմայի ընտրության նպատակն է օգնել սկսնակ փաստաբաններին ճիշտ կազմակերպել իրենց փաստաբանական (ձեռնարկատիրական) գործունեությունը: Ըստ ակումբի մասնակցիների թեման իստ արդիական է և շարունակական բնույթ է կրում:

Քննարկումը վարում էր Փաստաբանների Պալատի խորհրդի անդամ, ակումբի աշխատանքները համակարգող Մելանյա Առուստամյանը:
Քննարկմանը որպես փորձագետներ հանդես են եկել Պալատի փաստաբաններ՝ Նիկոլայ Հակոբյանը և Օվսաննա Ստեփանյանը;

Ելույթողները ներկայացրել են, տարբեր կազմակերպաիրավական ձևեր ընտրելու առանձնահատկությունները և հարկային ռիսկերը:

Քննարկման ընթացքում բարձրաձայնվել են ներկայում գործող օրենքներում մի քանի միմյանց հակասող իրավական ակտերի մասին:

Փաստաբան Հայկազ Գալստյանը հետաքրքրվել է այն մասին, թե պետական մարմիններում, դատարաններում պետական տուրք են մուծում պետական բյուջեից, այսինքն՝ Պետական բյուջեից վերցված գումարը դարձյալ ուղղվում է պետական բյուջե:
Իսկ քաղաքացիները և իրավաբանական անձինքն պետական մարմինների դեմ ուղղված հայցերով դիմում են դատարան և մուծում են պետական տուրք (կամ տարաժամկետվում է պետական տուրքի վճարումը) և պարտվելու դեպքում պետական տուրքի գումարը գանձվում է իրենցից և ուղղվում պետական բյուջե:

Ակումբի մասնակիցները արձանագրել են, որ այս դեպքում խախտվում է կողմերի հավասարության սկզբունքը, քանի որ կողմերը գտնվում են անհավասար պայմաններում:

Ակումբի մասնակիցները առաջարկել են այս խնդրի կապակցությամբ միջոցառումներ իրականացնել:

ՀՀ Փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամները առաջարկել են սկսնակ փաստաբանների համար կազմակերպել մեկ գործնական քննարկում՝ Քրեական գործերով նախաքննության ընթացքում որպես պաշտպան ներգրավվելու ընթացակարգի մասին:

Հաջորդ նորությունը: ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎՏԱՆԳԵԼՈՒ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Առաջարկվող նորություններ

26.11.2013ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎՏԱՆԳԵԼՈՒ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ



18.12.2013ՄԵԿ ՏԱՐՈՒՄ՝ 9-Ը ԱՐԴԱՐԱՑՈՒՄ. ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԸ 2013-Ը ԱՆՆԱԽԱԴԵՊ ՏԱՐԻ Է ՀԱՄԱՐՈՒՄ

20.12.2013ՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱ

28.12.2013ԸՆԴՈՒՆՎԵԼ Է «ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՃԱՐՆԵՐԻՆԵՐԻ ՄԻՋԻՆ

ԳՆԱՑՈՒՑԱԿ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՈՒՄԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })